

ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏ ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆԻ ՄՈՏ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 26-ԻՆ
ԺԱՄԸ 14:00-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ՝ ՏԵՍՉԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ
ՆԻՍՏԻ

**քաղ. Երևան
Մասնակցում էին՝**

Խորհրդի անդամներ՝

Ա. Գևորգյան	ՀՀ փոխվարչապետի, ՀՀ տարածքային կառավարման նախարարի պաշտոնակատար
Տ. Դավթյան	ՀՀ էկոնոմիկայի նախարարի պաշտոնակատար
Վ. Գաբրիելյան	ՀՀ ֆինանսների նախարարի պաշտոնակատար
Ս. Կարապետյան	ՀՀ գյուղատնտեսության նախարարի պաշտոնակատար
Դ. Դումանյան	ՀՀ առողջապահության նախարարի պաշտոնակատար
Ա. Մովսիսյան	ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարի պաշտոնակատար
Ա. Ասատրյան	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի պաշտոնակատար
Հ. Թովմասյան	ՀՀ արդարադատության նախարարի պաշտոնակատար
Գ. Պողոսյան	Փոքր և միջին բիզնեսի հիմնադրամի տնօրեն
Մ. Հակոբյան	Սպառողների ազգային ասոցիացիայի նախագահ
Լ. Յագոբյան	«Սպառողների իրավունքների պաշտպանություն» ՀԿ-ի նախագահ
Ր. Մխչյան	Հայաստանի արտահանողների ասոցիացիայի նախագահ
Վ. Կարապետյան	Հայաստանի փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոն հիմնադրամի գործադիր տնօրեն

Մասնակիցներ՝

Դ. Սարգսյան	ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար
Տ. Գևորգյան	ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավարի տեղակալ
Ս. Պապյան	ՀՀ բնապահպանության նախարարի պաշտոնակատարի առաջին տեղակալ
Կ. Մինասյան	ՀՀ Էկոնոմիկայի նախարարի պաշտոնակատարի առաջին տեղակալ
Ա. Ավետիսյան	ՀՀ տրանսպորտի և կապի նախարարի պաշտոնակատարի տեղակալ
Ա. Կարապետյան	ՀՀ քաղաքաշինության նախարարի պաշտոնակատարի տեղակալ
Կ. Հարությունյան	ՀՀ կրթության և գիտության նախարարի պաշտոնակատարի տեղակալ
Հ. Մխիթարյան	ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարի պաշտոնակատարի տեղակալ
Ա. Անդրեասյան	ՀՀ տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի նախագահ
Կ. Արեւյան	Երևանի քաղաքապետի տեղակալ
Ս. Վասիլյան	ՀՀ քաղաքացիական ծառայության խորհրդի նախագահի տեղակալ
Վ. Միրումյան	ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահի տեղակալ
Ա. Բախչազուլյան	ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայության պետ
Ա. Խուրդյան	«Հրապարակում» ծրագրի ղեկավար
Ս. Տոնոյան	ՀՀ կառավարության աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչության պետի պաշտոնակատար
Ռ. Վարդանյան	ՀՀ կառավարության աշխատակազմի ֆինանսատնտես-

սագիտական վարչության պետի տեղակալ

Լ. Խալիկյան	ՀՀ էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի շուկայի վերահսկողության պետական տեսչության պետ
Ա. Վանյան	ՀՀ առողջապահության նախարարության աշխատակազմի հիգիենիկ և հակահամաճարակային տեսչության պետ
Վ. Ասլանյան	ՀՀ կառավարության աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչության առաջատար մասնագետի պաշտոնակատար
Ա. Խաչիկյան	ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության աշխատակազմի փրկարար ծառայության ծառայության կազմակերպման վարչության պետ
Ն. Բադալյան	ՀՀ էկոնոմիկայի նախարարության տեսչական բարեփոխումների խմբի ղեկավար
Մ. Ղազարյան	ՀՀ էկոնոմիկայի նախարարության տեսչական բարեփոխումների խմբի փորձագետ
Վ. Դաբադյան	ՀՀ էկոնոմիկայի նախարարության տեսչական բարեփոխումների խմբի փորձագետ
Ա. Ասոյան	ՀՀ էկոնոմիկայի նախարարության տեսչական բարեփոխումների խմբի փորձագետ
Գ. Մնակչյան	ՀՀ էկոնոմիկայի նախարարության տեսչական բարեփոխումների խմբի փորձագետ
Ա. Նազարյան	ՄՖԿ ներդրումային միջավայրի բարեփոխումների ծրագրի ղեկավար
Ա. Գոմկցյան	ՄՖԿ-ի երևանյան գրասենյակի փորձագետ
Գ. Պողոսյան	ՎՋԵԲ գործարարության աջակցման գրասենյակի ղեկավար
Ս. Ծատուրյան	ՎՋԵԲ-ի գործարարության աջակցման գրասենյակի փորձագետ
Ի. Հովհաննիսյան	ՎՋԵԲ-ի գործարարության աջակցման գրասենյակի իրավաբան խորհրդատու

1. ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայության թվով 6 ստուգաթերթերին հավանություն տալու վերաբերյալ

(Ա. Բախչագույան, Տ. Սարգսյան)

Քննարկումներից հետո որոշվեց՝

1) հավանություն տալ ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայության թվով 6 ստուգաթերթերի նախագծերին.

2) հանձնարարել ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայության պետ Ա. Բախչագույանին՝

ա. Տեսչական բարեփոխումների խորհրդի քարտուղարության հետ համատեղ փորձարկել ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայության ռիսկի վրա հիմնված ստուգումների ձևամթերքի և այլ սննդամթերքի արտադրության ստուգաթերթերը,

բ. ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայության թվով 6 ստուգաթերթերի նախագծերի վերջնական տարբերակը սահմանված կարգով ներկայացնել ՀՀ կառավարության նիստի քննարկմանը,

գ. համագործակցելով մասնագիտացված կառույցների հետ՝ ձեռնարկել այնպիսի միջոցներ, որոնց արդյունքում հանրությանը պատշաճ մակարդակով կներկայացվի ՀՀ-ում գործող արդյունավետ մշտադիտարկման համակարգը,

դ. հանրային իրազեկման գործընթացում, ըստ անհրաժեշտության, դիմել նաև ԵՄ-ի համապատասխան կառույցներին՝ տեխնիկական խորհրդատվություն ստանալու համար.

3) հանձնարարել Տեսչական բարեփոխումների խորհրդի քարտուղարությանը՝ այսուհետ օրակարգային հարցերը խորհրդի անդամներին տրամադրել նիստը հրավիրելուց առնվազն 7 օր առաջ:

2. ՀՀ տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի ռիսկի վրա հիմնված ստուգումների մեթոդաբանությանը հավանություն տալու վերաբերյալ

(Ա. Անդրեասյան, Տ. Սարգսյան)

Քննարկումներից հետո որոշվեց՝

1) հավանություն տալ ՀՀ տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի ռիսկի վրա հիմնված ստուգումների մեթոդաբանության վերջնական լրամշակված նախագծին.

2) հանձնարարել ՀՀ տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի նախագահ Ա. Անդրեասյանին՝ ՀՀ տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի ռիսկի վրա հիմնված ստուգումների մեթոդաբանության նախագիծը սահմանված կարգով ներկայացնել ՀՀ կառավարության նիստի քննարկմանը:

3. ՀՀ տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի ստուգաթերթերին հավանություն տալու վերաբերյալ

(Ա. Անդրեասյան, Տ. Սարգսյան)

Քննարկումներից հետո որոշվեց՝

1) հավանություն տալ ՀՀ տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի ստուգաթերթերի վերջնական լրամշակված նախագծերին.

2) հանձնարարել ՀՀ տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի նախագահ Ա. Անդրեասյանին՝ քննարկել ՀՀ բնապահպանության նախարարի պաշտոնակատարի առաջին տեղակալ Ս. Պապյանի առաջարկությունը, ըստ անհրաժեշտության լրամշակել ՀՀ տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի ստուգաթերթերի նախագծերը և վերջնական տարբերակը սահմանված կարգով ներկայացնել ՀՀ կառավարության նիստի քննարկմանը:

4. ՀՀ էկոնոմիկայի նախարարության շուկայի վերահսկողության տեսչության ռիսկի վրա հիմնված ստուգումների մեթոդաբանությանը հավանություն տալու վերաբերյալ

(Լ. Իսախյան, Տ. Սարգսյան)

Քննարկումներից հետո որոշվեց՝

1) հավանություն տալ ՀՀ էկոնոմիկայի նախարարության շուկայի վերահսկողության տեսչության ռիսկի վրա հիմնված ստուգումների մեթոդաբանության նախագծին.

2) հանձնարարել ՀՀ էկոնոմիկայի նախարարի պաշտոնակատար Տ. Դավթյանին՝ ՀՀ էկոնոմիկայի նախարարության շուկայի վերահսկողության տեսչության ռիսկի վրա հիմնված ստուգումների մեթոդաբանության նախագիծը սահմանված կարգով ներկայացնել ՀՀ կառավարության նիստի քննարկմանը:

5. ՀՀ էկոնոմիկայի նախարարության շուկայի վերահսկողության տեսչության թվով 19 ստուգաթերթերին հավանություն տալու վերաբերյալ

(Լ. Իսախյան, Տ. Սարգսյան)

Քննարկումներից հետո որոշվեց՝

1) հավանություն տալ ՀՀ էկոնոմիկայի նախարարության շուկայի վերահսկողության տեսչության թվով 19 ստուգաթերթերի նախագծերին.

2) հանձնարարել ՀՀ էկոնոմիկայի նախարարի պաշտոնակատար Տ. Դավթյանին՝ ՀՀ էկոնոմիկայի նախարարության շուկայի վերահսկողության տեսչության թվով 19 ստուգաթերթերի նախագծերը սահմանված կարգով ներկայացնել ՀՀ կառավարության նիստի քննարկմանը:

6. ՀՀ առողջապահության նախարարության հիգիենիկ և հակահամաճարակային պետական տեսչության թվով 12 ստուգաթերթերին հավանություն տալու վերաբերյալ

(Ա. Վանյան, Տ. Սարգսյան)

Քննարկումներից հետո որոշվեց՝

1) հավանություն տալ ՀՀ առողջապահության նախարարության հիգիենիկ և հակահամաճարակային պետական տեսչության թվով 12 ստուգաթերթերի նախագծերին.

2) հանձնարարել ՀՀ առողջապահության նախարար Դ. Դումանյանին՝

ա. ՀՀ առողջապահության նախարարության հիգիենիկ և հակահամաճարակային պետական տեսչության թվով 12 ստուգաթերթերի նախագծերը սահմանված կարգով ներկայացնել ՀՀ կառավարության նիստի քննարկմանը,

բ. հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետությունում կյանքի որակի հետազոտություն» զեկույցի արդյունքները՝ ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանի մոտ առանձին քննության առնել առողջապահության ոլորտում առկա խնդիրները:

7. «Տեսչական ծառայության մասին» ՀՀ օրենքի նախագծին հավանություն տալու վերաբերյալ

(Գ. Պողոսյան, Տ. Սարգսյան)

Քննարկումներից հետո որոշվեց՝ հանձնարարել ՀՀ էկոնոմիկայի նախարարի պաշտոնակատար Տ. Դավթյանին՝

1) ՀՀ արդարադատության նախարարի պաշտոնակատար Հ. Թովմասյանի և ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարի պաշտոնակատար Ա. Մովսիսյանի առաջարկությունների հիման վրա լրամշակել «Տեսչական ծառայության մասին» ՀՀ օրենքի նախագիծը, ըստ որի՝

ա. բարեփոխումները կիրականացվեն փուլային եղանակով, որտեղ առաջին փուլում յուրաքանչյուր նախարարության կազմում կձևավորվեն տեսչական խորհուրդներ, իսկ երկրորդ փուլում՝ կքննարկվեն տեսչությունների միավորման հարցերը և կիրականացվի տեսչությունների միավորման առաջին փորձնական (պիլոտային) ծրագիրը,

բ. կհանվի վարձատրության վերաբերյալ դրույթը և այն կդիտարկվի աշխատավարձերի միասնական հայեցակարգի ներքո.

2) վերջնական լրամշակված տարբերակը սահմանված կարգով ներկայացնել ՀՀ կառավարության աշխատակազմ:

8. «Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի մայիսի 29-ի N 594-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մասին

(Ն. Բադալյան, Տ. Սարգսյան)

Քննարկումներից հետո որոշվեց՝ հանձնարարել ՀՀ էկոնոմիկայի նախարարի պաշտոնակատար Տ. Դավթյանին՝ ՀՀ արդարադատության նախարար Հ. Թովմասյանի հետ համատեղ քննարկել ներկայացված որոշման նախագիծը և ներկայացնել վերջնական առաջարկություն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՎԱՐՉԱՊԵՏ

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ